«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 3

10.12.2021թ.

1. Համալսարանի ստորաբաժանումներում ուսումնական պարապմունքների կազմակերպման ընթացքի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց.

1.1. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև դեկտեմբերի 15-ը, մեկ շաբաթյա ժամկետում, վերլուծել իրավիճակը և բացակայությունները հիմնավորումներով նվազեցնելու հնարավո-րություն ընձեռել միայն 5-րդ կուրսի սովորելու ցանկություն ունեցող, օբյեկտիվ պատճառներով բացակայած, ոլորտում աշխատող ուսանողներին:

1.2. ԱՏՖ «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա» կրթական ծրագրի հեռակա ուսուցման վճարովի համակարգի մագիստրանտ Սևիլյա Մանուկյանին բացառության կարգով ընձեռել բացակայությունները թույլ տալ լրացնելու հնարավորություն (ըստ սահմանված կարգի) և սահմանել քննաշրջանի նոր գրաֆիկ:

2. ՀԱԱՀ Ա.Քոչինյանի անվան քոլեջում և հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ.

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել Ա. Քոչինյանի անվան քոլեջի տնօրեն Վ. Վարդանյանին.

- սեղմ ժամկետում տանել բացատրական աշխատանքներ՝ ուսումնական պարապմունքներից մեծաթիվ բացակայություններ ունեցող ուսանողների և նրանց ծնողների հետ,

- սեղմ ժամկետում հանդիպում կազմակերպել քոլեջի ՊԳՏ 3-րդ կուրսի ուսանողների հետ: Հանդիպմանը հրավիրել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին, ՈՒԳԿՎ պետ Ա. Աղասարյանին, բուսաբուծության և հողագիտության ամբիոնի վարիչ Գ. Թովմասյանին և ջերմատան պատասխանատուներին: Կազմակերպել այցելություն ջերմատուն, իսկ առավել շատ բացակայող ուսանողներին ներգրավվել ջերմատան աշխատանքներում:

2.3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին լաբորատոր նոր սարքավորումների օգտագործման ուղղությամբ կազմակերպել վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի ուսուցչական անձնակազմի համար:

2.4. Հանձնարարել հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի տնօրեն Ա. Հակոբյանին՝ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին սեղմ

ժամկետում ներկայացնել քիմիա առարկայի լաբորատոր պարապմունքների համար անհրաժեշտ փորձանոթների, նյութերի ցուցակ:

3. ՀԱԱՀ ռազմավարական գործողությունների պլանի և ինստիտուցիոնալ հավատարմագրման համատեքստում հաստատված «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի» կատարողականի վերաբերյալ.

3.1. Ընդունել ի գիտություն:

3.2. Հանձնարարել ՈԳԱԿ տնօրեն Լ. Զաքարյանին սեղմ ժամկետում մշակել ՀԱԱՀ ռազմավարական գործողությունների պլանի և ինստիտու-ցիոնալ հավատարմագրման համատեքստում հաստատված «Փորձագի¬տական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի» կատարողականից բխող հանձնարարականներ, իրականացման ժամանակացույց և տրամադրել ստորաբաժանումների ղեկավարներին:

4. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Արթուր Վարդանի Հովհաննիսյանի դիմումի վերաբերյալ.

Բավարարել ԱԲԱ ֆակուլտետի անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Արթուր Վարդանի Հովհաննիսյանի դիմումը և բացառության կարգով թույլատրել առարկայական կրեդիտային տարբերությունները հանձնել անվճար հիմունքներով:

5. 2019-2020 ուս տարվա Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Մելս Կարապետի Ամբարդանյանի ուսանողական իրավունքների վերականգնման հարցի վերաբերյալ.

Հանձնարարել ՈՒԳԿՎ պետ Ա. Աղասարյանին և ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին 2019-2020 ուս տարվա Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Մելս Կարապետի Ամբարդանյանի ուսանողական իրավունքների վերականգնման հարցով դիմել ՀՀ ԿԳՄՍՆ, ներկայացնել հարցը, այնուհետև գործել համաձայն նախարարությունից ստացված ցուցումների:

6. 2020-21 ուս տարվա ԱԷԿ ՍԷԿ 4-րդ կուրսի ուսանող Արմեն Հովսեփի Փալանջյանի ուսման վարձավճարի զեղչման հարցի վերաբերյալ.

Հանձնարարել ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին, իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին՝ լրացուցիչ քննարկել հարցը և Արմեն Հովսեփի Փալանջյանի ուսման վարձավճարի զեղչի հարցին անդրադառնալ 2021-2022 ուս տարվա ՀՈՒԴ ուսանողների զեղչերի քննարկման ժամանակ:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ